ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-4-3-Ա

ք. Երևան 29.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 29-ի նիստում քննարկեց 2020 թվականի հունիսի 11-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ Limited Liability Company "DIAMED-farma" ընկերության (Sovetskaya street, 31, Pervomayskiy community, Korolev city RU-141069 Moscow region) բողոքը «МУКОСАТ» (IR1390027) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «MUCOSIN» (Sanofi 54 rue la Boétie F75008 Paris (FR), IR 824061) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-ին ենթակետի, 122-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները, որոնց նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով: Համեմատվող ապրանքային նշանները զուգորդվում են միմյանց հետ իրենց համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների՝ միմյանց նկատմամբ դասավորվածությամբ, այն է՝ «MUCOSIN» և «МУКОСАТ»: Անդրադառնալով կրկնական փորձաքննություն խնդրարկելու մասին դիմումին կից ներկայացված

նամակ-համաձայնագրին, տեղեկացնում ենք, որ համաձայնագրում նշված սահմանափակված ապրանքները, որոնց համար տրված է համաձայնությունը հայտարկված ապրանքային նշանը գրանցելու համար, առկա չեն միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ, հետևաբար անհրաժեշտ է կատարել ապրանքների սահմանափակում, որը իրականացնում է ՄՍՀԿ միջազգային բյուրոն:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է նամակ համաձայնագրեր հակադրվող ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ներկայացված նամակ համաձայնագրի առկայության դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «МУКОСАТ» (IR1390027) ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ